

Արտագաղթի հասարակական-առարկայական եւ ենթակայական պատճառները



Եթե որեւէ երկրում, ուր կան տնտեսական լուրջ դժվարություններ, ուր արդարադատության համակարգը լավ չի աշխատում եւ ուր ժողովրդավարությունը ձեւական է եւ ոչ կայացած, այդ երկրում զարգանում են հոռի բարքերը, աճ են արձանագրում հանցագործությունները, օրինազանցությունները, օրենքը շրջանցելը: Զասարակական նման պայմաններում ժողովուրդն ընդհանրապես ինքն իրեն իր երկրի տերը չի զգում եւ այս զգացման գլխավոր պատճառները ոչ թե անպայման տնտեսական դժվարությունները, այլ դատական համակարգի անկատար լինելը, երկրում տիրող անարդարությունները եւ ձեւական ու անվանական ժողովրդավարությունն են, որոնք արտագաղթի գլխավոր պատճառներն են: Այստեղ կարելի է անմիջապես ավելացնել, որ մեր երկրի ոչ բոլոր քաղաքացիներն են, որ նկարագրված հասարակական երեւոյթներին ի տես շեղումներ են թույլ տալիս եւ կամ արտագաղթում են:

Հիշյալ պատճառներում հոռի բարքերի են դիմում եւ կամ արտագաղթում են նրանք, որոնք ատակ են հոռի բարքեր դր-

սելորելու եւ կամ արտագաղթելու: Կենդանիների բոլոր տեսակներն օժտված են բնազդներով, որոնցից գլխավորը հավաքական գոյատեւման բնազդն է: Մարդկությունը եւ մարդկային տեսակները, իբրեւ կենդանական տեսակ եւ ենթատեսակներ՝ ազգեր, օժտված են բնազդներով, ձգտումներով, միտումներով, սակայն մարդկությունն ու մարդկային տեսակները, ի տարբերություն այլ կենդանատեսակների, չեն կարող գոյատեւել ու հարատեւել միմիայն բնազդներով:

Մարդկանց մեջ կան նաեւ բնազդներ կամ հակումներ, ինչպիսիք են՝ գողությունը, սպանությունը, հափշտակումը, հարձակողականությունը եւ այլն, որոնք, եթե չհակաշնչվեն եւ չվնասագործվեն, հավաքական-հասարակական կյանքն անկարելի կդառնան:

Օրինակ՝ մարդկանց հարձակողական հակումները հակակշռելու ու վնասագործելու համար մեծ դեր է վերապահված մարգատեսակներին՝ հատկապես մարմնական-ֆիզիկական ուժ պահանջող մարգատեսակներին:

Աջքածակությունը, ազահությունը, ընչաքաղցությունը եւս վնասակար հակումներ են, որոնք պետք է վնասագործվեն:

Կան նաեւ բնազդներ, հակումներ, որոնց պետք է զորացնել, ինչպիսիք են՝ հարմարվողականությունը՝ գոյատեւման ձգտող հարմարվողականությունը եւ ոչ թե կրավորական հարմարվողականությունը, եւ հավաքական-ազգային գոյատեւման ու հարատեւման դրական հակումները: Հակումներ, որոնք շատ թույլ են անպատասխանատու արտագաղթողների մեջ: Այս վերջինները հետաքրքրված չեն ազգային-հավաքական գոյատեւմամբ, ազգային ինքնությամբ, որով դառնում են պարզապես ուտող-խմող, անդեմ աշխարհաքաղաքացիներ, որոնք մտահոգված են միմիայն իրենց ու իրենց ընտանիքների «կաշին փրկելու» բացասական նկրտումներով:

Արտագաղթողներն իրենց բացասա-

կան վարքագծով նույնպես են արդեն իսկ մեր նոր թիվը, վնասում են մեր անվտանգությանը եւ մեր երկրի դժվարություններից խույս տալով՝ ավելի մեծ դժվարությունների են մատնում երկրում մնացողներին, եւ ինչպես մեր ժողովրդի ներկայով ու ապագայով շահագրգռված մարդիկ են ասում՝ արտագաղթողները պատասխանատու են շփման գծում արյուն թափած եւ զոհված կամ զոհվող զինվորների նկատմամբ. սա իրականություն է:

Մենք կարծում ենք, որ մեր իշխանությունները եւ քաղաքական ուժերը, համապատասխան ռազմավարություն մշակելով, կարող են զորացնել մեր իշխած դրական հակումները եւ թուլացնել բացասական միտումները:

Վերը անդրադարձանք այն հարցին, թե ինչպես կարելի է հարձակողականությունը հակակշռել մարմնական ուժ պահանջող մարգածեւերի միջոցով:

Աշխարհում կան զարգացած ու հարուստ երկրներ, ուր փորձում են արտագաղթել մեր արտագաղթողները, եւ այս վերջինները դժբախտաբար չգիտեն, որ այդ երկրները հենց այնպես չեն զարգացել ու հարստացել. այդ երկրների բնակիչները ժամանակին հաճախ ավելի մեծ դժվարությունների են դիմագրավել, քան այն, ինչ մենք դիմագրավում ենք այսօր: Այդ երկրների բնակիչների թափած արյան եւ քրտնաջան, երկարատեւ ու հետեւողական ջանքերի շնորհիվ է, որ նրանք՝ այդ ազգաբնակչությունները, կարողացել են հարուստ, զարգացած երկրներ կառուցել:

Այսօրվա հարուստ ու զարգացած երկրների բնակիչները ժամանակին, անշուշտ, չգիտեին, որ օրերից մի օր Հայաստանի ազգային գիտակցությունը, ինքնությունը եւ արժանապատվությունը կորցրած եւ անպատասխանատու որոշ հայեր կարտագաղթեն դեպի այդ երկրները, կուտեն, կխմեն եւ կվայելեն կյանքի, արյան ու քրտնաջանի միջոցով ձեռք բերված բարիքները:

Իմիջիայլոց, ասենք, որ աշխարհում

չկան ավետյաց երկրներ եւ դրախտավայրեր: Աշխարհի ամենազարգացած եւ ամենահարուստ երկրներն անգամ ունեն իրենց յուրահատուկ դժվարությունները եւ այդ դժվարությունները կզգան այն արտագաղթողները, որոնց մեջ ազգային պատկանելության ու արժանապատվության ինչ- որ հետք է մնացել, եւ կանդրադառնան, որ հայրենիքում մնալն ու հայրենիքի դժվարություններին համակերպվելը եւ միեւնույն ժամանակ դրանց դեմ պայքարելը շատ ավելի լավ են, քան՝ օտարության, պանդխտության ու ազգային ստորակայության պատճառած տառապանքները:

Մեր ժողովրդի բազմացումը չափազանց կենսական է, ոչ թե միայն մեր երկրի զարգացման առումով, այլ կենսական է նույնիսկ մեր գոյատեւման իմաստով: Ակնհերե է, որ այսօր մեր երկրից արտագաղթում են կուշտ ու կուռ ուտել- խմելով գոհացող անդեմ աշխարհաքաղաքացիները, սակայն եթե արտագաղթ գոյություն ունի, դա չի նշանակում, որ չի կարելի ներգաղթ կազմակերպել: Ներգաղթ, որով կարելի է դեմ դնել արտագաղթին: Իհարկե, դա շատ դժվար է ներկա պայմաններում, բայց անկարելի չէ:

Սփյուռքի հայ համայնքներում կան շերտեր, որոնք պատրաստ են իրենց հայրենիքում հաստատվելու եւ պանդխտությունից ձերբազատվելու, սակայն դա ինքնիրեն չի լինելու: Դա կլինի այն ժամանակ, երբ առաջին հերթին մեր իշխանությունները եւ մեր քաղաքական, կրոնական կազմակերպություններն ու այլ հաստատությունները միանաբար համապատասխան քաղաքականություն ու նախագծեր շտկեն եւ հետեւողականորեն դրանք գործադրեն:

Ներգաղթից էլ ավելի մեծ նշանակություն ունի բազմազավակության խթանումը մեր երկրում՝ դարձյալ համապատասխան քաղաքականություն մշակելով եւ այն հետեւողականորեն գործադրելով:

Այվազ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Երեւան

Աֆորիզմներ

Ցանկացած քարոզչություն միջոց է՝ մարդկանց բնական մտածողությունը շեղելու կամ շրջելու դեպի այն կողմը, որը շահեկան է:

Գողության կատարելագործության ձեւ է, երբ շահում են մարդու վստահությունը, ապա հանգիստ յուրացնում աչքադրածը:

Ժամանակի մեծ կորուստը սկսվում է րոպեների աննկատ վատնումներից:

Առաջադիմության կարելիոր նախապայմաններից է ժամանակն արդյունավետ օգտագործելը:

Չար մարդկանց հոգու չարությունը կնիք է դնում նրանց դեմքերին:

Հույսն ու հուսախաբությունը հիմնականում շարունակական հոգեվիճակներ են:

Ժամանակի ընթացքում բարությունն անողին մեկը փոխհատուցում է կրկնակի, պատահում է՝ մեկ ուրիշն էլ եռակի վատությամբ:

Հակառակորդները կարող են հաշտության եզրեր գտնել, եթե գործեն սթափ բանականությամբ ու շրջահայացությամբ:

Պատերազմով հարցեր չեն լուծում, այլ բարդացնում են ու ավելացնում նորերը:

Բռնությամբ ձեռք բերածը չի կարող երջանկություն պարգեւել:

Պատերազմող կողմերը, երբ հսկայական կորուստներ են ունենում, զենք արտադրողներն էլ հսկայական եկամուտներ են ստանում:

Պատերազմով ձեռք բերածը, նույնիսկ հաղթանակը, ոչ մի կերպ չեն կարող փոխհատուցել ժողովրդի գեւնֆոնդին հասցված վնասը, կորուստը:

Վտանգավոր գեւնք ունենալուց գերադասելի է վտանգավոր թշնամի չունենալը:

Երանելի է այն ընտանիքը, որտեղ հարգանքն ու հոգատարությունը մշտական հոգու պահանջ է:

Լավ է խելոք մարդու հետ քարոզավայրում լինել, քան դրախտում՝ հիմարի հետ:

Անազնիվ նպատակներ իրագործելու համար ոմանց հաջողվում է օգտագործել ազնիվ գաղափարներ:

Պարտված ճշմարտությունը գերադասելի է հաղթած կեղծիքին:

Անազնիվ ճանապարհով նպատակին հասնողը ճանապարհին շատ բան էլ կորցնում է:

Այն, ինչ ձեռք է բերվում շրջանցելով Աստծու կամքը, տերը չէ:

Կան մարդիկ, ովքեր ազատությունն ու սանձարձակությունը չեն տարբերում:

Երբեմն անտեսված փոքր խոչընդոտը պատճառ է դառնում մեծ դժբախտության ու աղետի:

Հաջողակի համար ամառ-ձմեռ, գիշեր-ցերեկ չկա, եթե բախտը պիտի բերի՝ ան-

պայման բերում է:

Ճշմարտությանը հասնում են՝ սխալները, պատրանքները հաղթահարելու շնորհիվ:

Այնտեղ, որտեղ արդարություն չկա, համերաշխություն չի կարող լինել:

Քարքարոտ ճանապարհով գնացողին հույսն է առաջ մղում:

Սկատված թերությունն ուղղում են խելացիները, հերքում են՝ կամակորները, արհամարհում են հիմարները:

Իմաստունները մահից հետո ապրող խելամիտների կողքին են լինում:

Այնտեղ, որտեղ պետք է գործել խելքով, ուժով գործելն անօգուտ է, վնասակար:

Մարդկության առաջադիմության երաշխիքը համերաշխ ապրելու արվեստին տիրապետելն է:

Էմմա ՊԵՏՐՈՍՅԱՆ

Երբ պատերազմն ավարտվի, հայրիկն անպայման կգա

Ապրիլի 25-ի լույս 26-ի գիշերը դարաբաղա-ադրբեջանական սահմանին հակառակորդի կողմից կրակի դադարեցման պայմանավորվածությունների խախտման արդյունքում զոհված Արամ Նիկողայի Առուշանյանը ԼՂՀ Մարտակերտի շրջանի Յաթերք գյուղից էր:

Փոխգնդապետ, «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի ասպետ եւ տասնյակ պետական եւ գերատեսչական մեդալների արժանացած Արամ Առուշանյանն անցել է 1990-ականների Արցախյան պատերազմի թոհուրոհով, եղել հրետանու պետ:

Ապրիլյան օրերին ինքնակամ ստանձնել է հրետանավոր-հրամանատարի իր ծառայությունը՝ անմիջապես հայտնվելով ամենաթեժ վայրերում:

Ապրիլի 2-ին, երբ սկսվեց պատերազմը, Արամը տիկնոջը՝ 35-ամյա Էլլադային 4 երեխաների հետ թողել է Մարտակերտի իր ծառայողական տանը եւ շտապել առաջնագիծ:

«Երբ Մարտակերտի վրա կրակում էին, խուճապի էի մատնվել: Չանգեցի, նա ասաց՝ վախենալու բան չկա, առաջին անգամ ես լսում կրակոցներ, վախդ երեխաների մոտ ցույց մի տուր: Ասացի՝ ո՞ր գնանք, ի՞նչ անենք, ասաց՝ դուռը փակեք, սպասեք, մենք ամբողջությամբ հսկում ենք իրավիճակը, բան չի լինի, հանգիստ եղեք: Յետո եկավ, մեզ տարավ Յաթերք՝ իր հայրական տուն ու գնաց: Մի քանի օր մնացինք Յաթերքում: Յետո եկավ, հետ Մարտակերտ տարավ: Ասացի՝ եթե նորից կրակեն, ես 4 երեխայի հետ ի՞նչ եմ անելու: «Մենք հսկում ենք, ոչինչ չի լինի», - պատասխանեց հու-

տակ», - պատմում է կինը: Իրավիճակը ապրիլի 25-ի լույս 26-ի գիշերը նորից վատացավ, Էլլադան երեխաների հետ տանը մենակ էր, ամուսինը գնացել էր Մատաղիսի եւ Թալիշի դիրքեր՝ ճշտումներ անելու: Մատաղիսի



դիրքերում էր, երբ հրանոթի կրակոցը խոցեց նրան:

Էլլադան ցույց է տալիս ամուսնուց մնացած մատուցները՝ թղթադրամի եւ անձնագրի մնացորդներ...

«Նրանից միայն սա է մնացել, դագաղը փակ են բերել: Թերեւս, այդ է պատճառը, որ չեմ կարողանում հաշտվել իրականության հետ: Անընդհատ ամբոխի մեջ նրան եմ փնտրում: Չավակներս էլ դեռ հավատում են, որ հայրը կգա: Ավագ որդիս՝ Արան, ասում է՝ մա՛մ, մի լացիր, պատերազմը, երբ ավարտվի, հայրիկն անպայման կգա»:

Փոխգնդապետի ավագ դուստրը եւ կրտսեր որդին առողջական խնդիրներ ունեն: Ինչպես Էլլադան է նշում՝ նախքան պատերազմը, բարոյություններից խուսափելու համար, տարին մի քանի անգամ հետազոտությունների էին տա-

նել: «Գիտեմ, որ անվերջ այստեղ չեմ կարող մնալ, սակայն Մարտակերտում գտնվող ծառայողական բնակարան վերադառնալն էլ ինձ համար հոգեպես դժվար է: Միայնակ չորս երեխաների հետ, անկեղծ ասաց, համարձակությունս չի հերիքում: Եթե, Աստված մի արասցե, նորից վտանգ լինի, ի՞նչ կարող եմ անել միայնակ, 4 երեխաների հետ», - ասում է Էլլադան:

Էլլադան ավարտել է ԱրՊՀ մանկավարժություն եւ տարրական դասարանների մեթոդիկա բաժինը, Մարտակերտում գրադարանավարուհի էր աշխատում, ասմունքի խմբակ էր վարում, այժմ էլ պատրաստակամություն ունի աշխատելու եւ ընտանիքի հոգսերը հոգալու:

Երեխաներից 3-ը հաճախում են Ստեփանակերտի Աշոտ Ղուկասի անվան դպրոցը, բոլորն էլ առաջադիմություն են ցուցաբերում ուսման մեջ:

«Յայրը կարելու էր երեխաների ուսումը, առավել շատ էր կարելու նրանց հայեցի դաստիարակությունը: Ասում էր՝ առաջին հերթին հայրենասիրությունն է, հետո մյուս բաները: Նրանց խրատում էր՝ եթե հայրենասեր չլինեք, երբեք դուք ձեր երեխաներին չեք կարող ճիշտ դաստիարակել: Մի երգ կար, շատ էր սիրում բառերը, անընդհատ երգում էր. «Կյանքս կտամ հայրենիքս...»: Ինձ էլ պատվիրում էր՝ երեխաներին անպայման դա սովորեցրու, ես էլ ասում էի՝ այնքան այդ երգը կերգես, մի օր իրականություն կդառնա: Չէի հասկանում՝ ինչ էի ասում... Վերջում այդպես էլ եղավ...», - տխուր պատմում է Էլլադան:

Արմինե ՆԱՐԻՆՅԱՆ

Մարտակերտում անցնում են բնականոն կյանքի՝ մշտական խաղաղության սպասումով



Ադրբեջանի կողմից սանձազերծված ապրիլյան պատերազմական գործողությունների առաջին իսկ օրերից Մարտակերտ քաղաքը հայտնվել է թշնամու նշանառության տակ:

100-ից ավելի բնակարաններ տուժել են հրետակոծումից, մեկ ու կես տասնյակն էլ՝ ավերվել: Առաջին վերականգնողական աշխատանքներն սկսվել են քառօրյա լայնածավալ գործողություններին հաջորդած զինադադարից հետո, սակայն ապրիլի 23-26-ը քաղաքը դարձյալ հայտնվել է թշնամու թիրախում:

Ռազմական գործողությունների հետեւանքով տուժել են հասարակական եւ մասնավոր շենքեր ու շինություններ:

Այժմ Մարտակերտում վերականգնողական մեծ աշխատանքներ են ծավալվել: Վերականգնվում է թշնամու հրթիռներից կաթվածահար եղած տնտեսությունը:

Քաղաքից հեռացած բնակիչներն էլ վերադառնում են քաղաք, սակայն դեռ չեն շտապում բերել երեխաներին, քանի որ

չեն հավատում հրադադարի պահպանմանը: «Մենք ուրիշ տեղ գնացողը չենք, միայն թե ուզում ենք համոզված լինել, որ երեխաների համար այլեւս ապահով է այստեղ», - ասում են:

Մարտակերտի կրպակում աշխատող Այա տատիկի կարծիքով՝ թուրքի հետ անհնար է խնդրի խաղաղ լուծման գալ: «Թուրքի հետ ընկերություն արա, բայց մահակը ձեռքիցս ցած մի դիր», - հիշեցնում է պապական խոսքերը եւ ավելացնում՝ բա թուրքը մա՞րդ է, որ հետը ընկերություն անես...

«Երկու պատերազմ ենք տեսել: Սա կյանք չէ, որ մենք ապրում ենք: Մեր երեխաները դիրքերում են, ոչ տուն են տեսնում, ոչ էլ՝ իրենց երեխաներին: Մինչեւ ե՞րբ պիտի այս ազգը տանջվի՝ չգիտեմ», - ասում է տարակուսանքով:

Մարտակերտի բնակչուհի Ա. Խաչատրյանի տունը ռմբակոծվել է ապրիլյան պատերազմի առաջին իսկ օրերին: Տան վերանորոգման աշխատանքներն արդեն սկսվել են:

«23 տարի է, ինչ «խաղաղության» պայմանագիր են կնքել, սակայն 23 տարի շարունակ կրակը չի դադարում, գոհերը չեն պակասում: Այս տարիների ընթացքում քանի՞ տասնյակ երիտասարդներ են զոհվել, քանի՞ տասնյակ խաղաղ բնակիչներ են տուժել. չեմ հասկանում՝ մեր դեկավարները չե՞ն կարողանում վերջնական խաղաղության պայմանագիր պարտադրել, - ասում է Ա. Խաչատրյանը եւ ավելացնում, - ինձ մեղավոր եմ զգում թոռներին առջեւ, ուզում եմ այն օրը գա, որ նրանց քնեցնելուց վստահ ասեմ՝ հանգիստ քնեք, թուրքը այլեւս չի կրակելու, էլ նկուղ չենք իջնելու, սահմանին կանգնած հայրիկդ ապահով է եւ անպայման տուն է գալու... Ես չեմ հավատում, որ հասարակ թուրքի մայրն իր երեխայի համար պա-

տերազմ է ուզում: Մի՞թե նա մայր չէ: Այս պատերազմը Ալիեւի ու նրա իշխանության պատերազմն է. հողեմ նրա կաշառակեր գլուխը»: Վրդովմունքից երկու ձեռքով ծածկում է երեսը եւ զսպում արցունքները:

«18 տարի երեխաներին պահում, մեծացնում ենք ու հույսներս դնում միայն Աստծո վրա, որ կպահի մեր երեխաներին, որ ծառայությունից ողջ տուն կվերադառնան, - ասում է Ա. Խաչատրյանը, ում ամուսինն ու երիտասարդ որդին զոհվել են առաջնագծում, - ես՝ որպես զոհվածի կին եւ զոհված որդու մայր, նշեմ, որ պետք չէ հետմահու պարգևատրել մեր հարազատներին, պետք չէ նրանց կորցնելուց հետո մեզ համար բնակարաններ ու տներ կառուցել... Որդու կորուստը ոչ մի բանով հնարավոր չէ փոխատուցել: Թող զինեն մեր բանակը, թող հզոր պետություն կառուցեն, թող այլեւս ոչ ոք չգա իմ ցավն ու դժբախտությունը...», - ասում է:



գա իմ ցավն ու դժբախտությունը...», - ասում է:



Մարտակերտից Լաուրա Շիրինյանը, ցույց տալով ավերված տունը, ասում է, որ տունը վնասվել է ապրիլի 27-ին՝ որդու ծննդյան օրը:

«Իրիկունները գնում ենք ապաստարան, առավոտները՝ գալիս տուն, հիմա էլ խաղաղության հույսով ենք ապրում: Այն հույսով, որ շուտով ամեն ինչ կվերջանա, եւ մենք կանցնենք մեր առօրյա կյանքին», - ասում է Լ. Շիրինյանը:

Դժբախտ պատահարից մահացած ամուսնու եւ որդու՝ պատից կախված լուսանկարները տիկին Լաուրան իջեցրել է. «Թուրքին հավատ չկա, վախենում եմ քաղաքը նորից ռմբակոծվի, նկարները շարքվեն»:

Լաուրայի որդին ամառը պետք է զորակոչվի բանակ: Յրաժեշտի միջոցառմանը ներկա են լինելու բոլոր բարեկամները. «Չգիտեմ ինչպե՞ս պետք է անցկացնեմ այդ երկու տարին, բայց գիտեմ, որ իմ որդին անպայման տուն կգա...», - ասում է նա:

Լուսինե ԹԵՎՈՍՅԱՆ

Ովքե՞ր են մեր թշնամիները

Աղոթեցանի կողմից սանձազերծված պատերազմական գործողությունները հայությանը, համախմբվելուց բացի, պարտադրել են՝ լուծել մի կարևոր խնդիր եւս. այն է՝ ովքե՞ր են մեր բարեկամները եւ թշնամիները:

Մշտական բարեկամի եւ մշտական թշնամու թեման կարելու է այնքանով, որ գերտերությունների կողմից պարտադրված «ղարաբա-աղոթեցանական հիմնախնդրի» կարգավորման ներկա վճռորոշ փուլում, երբ բախվում են «հսկաների» շահերը, հայը կարողանա գիտակցել սեփական ազգային շահը ու հերթական անգամ «մշտական բարեկամի» խարդավանքի գոհը չդառնա: Ցանկացած պարագայում հայը պիտի ապավինի Աստծուն եւ իր հավաքական ուժին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ բարեկամ պետությունների աջակցությամբ (հաշվի առնելով նրանց շահերը) լուծի իր հիմնախնդիրները:

Իր հազարամյակների պատմության ընթացքում հայն ունեցել է եւ ունի բազմաթիվ թշնամիներ՝ ներքին եւ արտաքին: Հենց էն գլխից՝ հայ ազգի ձեւավորման վաղ շրջանում, Հայկ Նահապետը պատերազմել է թշնամի Ասորեստանի բռնակալ թագավոր Բելի դեմ եւ հաղթել: Դա, իրավաբանորեն, համարվում է մարդկության պատմության մեջ առաջին լուրջ պատերազմը բարի եւ չար ուժերի միջեւ, որտեղ հաղթել է Բարին: Հայկ Նահապետի օրոք էլ ու նրանից հետո՝ հայության թշնամիները հերթափոխել են իրար: Պատմական Հայաստանը՝ Մեծ Հայքը, Փոքր Հայքը եւ Կիլիկիան, լինելով Արեւմուտքի եւ Արեւելքի խաչմերուկում, դարձել է պատերազմների թատերաբեմ: Պատահական չէ, որ Հին աշխարհի բոլոր հզոր պետությունները, որոնք աշխարհակալական նկրտումներ են ունեցել, կամա թե ակամա պատերազմել են Հայաստանի դեմ՝ ավելացնելով հայության թշնամիների քանակը: Սակայն հայոց պատմությունից հայտնի են բազմաթիվ դեպքեր, երբ երբեմնի թշնամիները դարձել են դաշնակիցներ կամ բարեկամներ:

Տարակուսելին այն է, որ հայության թշնամիներն այնքան շատ են եղել իրարից տարբեր՝ բնությունների ու դաժանությունների տեսանկյունից, որ հայերը թշնամիներին տարբերակել ու տարբերակում են՝ լավի ու վատի, ցեղասպանի եւ ազատարարի, բարբարոսների, անգութների եւ առաջադիմական մշակութային տարածողների: Մեր թշնամիներից կա նաեւ այնպիսին, որը երբեք դարից ավելի բացարձակ թշնամություն է անում, միեւնույն է, հայության մեծամասնության համար մնում է հավերժական բարեկամ: Խոսքը, իհարկե, Ռուսաստանի մասին է: Իսկ Թուրքիան, որը՝ եթե անգամ պատռվի էլ ու լույս տա, միեւնույն է, մնալու է հավերժական թշնամի:

Դժբախտաբար, մեր՝ հայերիս դիրքորոշումը շատ դեպքերում պայմանավորված է եղել մեր թշնամիների գործունեությամբ, որն իր հետքն է թողել հայկական մտածելակերպի ու գործելակերպի վրա: Հաճախ մենք՝ հայերս, այնքան ենք տարված եղել մեր մշտական թշնամուն ցանկացած բնագավառում հակահար-

ված տալու կամ մշտական բարեկամին հաճոյանալու գաղափարներով, որ կամա թե ակամա մտածել ենք հակաթուրքավայել կամ ռուսավայել: Ցավոք, դեռ հիմա էլ ենք շարունակում այդպես մտածել: Երբից ստիպված ենք դիմելու մեծն Նժդեհի օգնությանը: Նա իր զինվորներին վարժեցնելիս եւ բարոյահոգեպես դաստիարակելիս մտապատկերում ունեցել է ոչ թե այս կամ այն թշնամու կերպարը, որի դեմ պետք է կռվեր հայ զինվորը, այլ՝ հայրենասեր ու ոգու զինվորի տեսլականը: Նժդեհի եւ նրա զինվորների համար թշնամին ազգություն չունեւ: Թշնամի են նրանք, ովքեր չար նպատակով հատում են Հայաստանի սահմանը՝ լինեն նրանք զինվորական, թե՛ քաղաքացիական հագուստներով, թե՛ Աստվածաշունչը ձեռքներին ծալված պառակտիչների տեսքով:

Այս պատերազմի ժամանակ եւ դրա-



նից հետո որոշ ժամանակ Արցախի բոլոր եկեղեցիները զիջել ու ցերեկ գործել են: Հավատացյալները իրենց աղոթքն են բարձրացրել առ Աստված, որ Բարձրյալը Իր Ամենախնամ Սուրբ Աջի հովանու ներքո պահպանի հայ զինվորին, ուժ եւ հաղթություն պարգևի նրան, որ ազգի թշնամիներին (անկախ ազգությունից) դուրս շարտեն մեր սահմաններից եւ վերադառնան իրենց հարազատ օջախները: Իսկ ովքե՞ր են մեր թշնամիները: Աստվածաշնչի մեջ ամենաբարդ եւ դժվարըմբռնելի պատվիրանն է՝ սիրել թշնամուն: Սակայն եթե փորձենք ճիշտ հասկանալ, սա Տիրոջից ավանդված մերձավորին սիրելու պատվիրանի շարունակությունն է: Այն մերձավորի, որը մեր հայրենակիցն է, մեր հարեանն է, բարեկամը, ընկերը, սակայն որն ինչ-ինչ պատճառով մեզ չի հասկանում, նախանձում, ատում է մեզ, սկսում է չարախոսել, բամբասել, վնասել, նույնիսկ կարող է հարվածել՝ պարզապես թշնամություն անել: Ահա թե որ թշնամիների մասին է ասում մեզ Տերը, որոնց պետք է սիրենք ու աղոթենք նրանց համար, եւ ոչ թե ազգի թշնամիների, որոնք ոտնձգություն են կատարում երկրի եւ բոլոր սրբությունների դեմ, որոնց մասին նույն Ավետարանի խոսքն ասում է. «Սուրբ բարձրացնողը սրից էլ կընկնի», իհարկե՝ իր հայրենիքը պաշտպանող հայ զինվորի սրից:

Սակայն ինչո՞ւ է ինչպե՞ս պետք է սիրենք մեր դեմ թշնամացած մարդկանց:

Մեր Փրկիչն ասաց. «Սիրեցե՛ք ձեր թշնամիներին» (Մատթ.5: 44, Ղուկ. 6: 27-35): Այս խոսքերը սիրտն են քրիստոնեական կյանքի. Եթե սիրող բախում է, ուրեմն մարդը կենդանի է, սիրող կանգնեց՝ մարդն այլեւս չկա: Այդպես էլ քրիստոնեությունը՝ առանց թշնամուն սիրելու պատվիրանի դառնում է ոչ լիարժեք:

Թշնամուն սիրելու պատվիրանն էլ քրիստոնեության գաղտնի ուժը հասկանալու բանալին է: Դա լույս է, որը պարզաբանում է Ավետարանի խորիմաստ տողերը: Թշնամուն սիրելը մուտք է քրիստոնեական Եկեղեցու Սրբության Սրբոցը:

Տերն ասաց, որ Աստծո եւ մարդու հանդեպ սիրո այս երկու պատվիրանի վրա են հաստատված Օրենքն ու մարգարեները: Իսկ թշնամիներին սիրելու նոր պատվիրանի մեջ պարփակված է Նոր Ուխտի ոգին: Այս խոսքերի մեջ, կա-

նով է ծածկված: Այնտեղ հասնել կարող են շատ քչերը, իսկ մենք մնում ենք ներքեւ: Միթե՛ եթե մենք չենք կարող սիրել մեր թշնամիներին, չենք կարող կատարել այս պատվիրանը, ուրեմն չէ՞նք փրկվի: Ապա ինչի՞ համար էր տրված մեզ կյանքը»:

Հիշենք, որ Ավետարանի պատվիրանները եւ՛ ծանր են, եւ՛ թեթեւ: Թեթեւ են, որովհետեւ մեր հոգին բնությամբ բարի է, որովհետեւ մեր մեջ դրված է ոչ միայն հատկություն, այլ նաեւ պահանջ՝ իրար սիրելու, իսկ դժվար են այն պատճառով, որ մեր գոռոզությանը հատուկ է ատել: Խոնարհությունը արծվի թելերի պես կարող է մեզ բարձրացնել սիրո բարձունքի վրա, իսկ հպարտությունը սուկալի շղթաների նման կապում է մեր հոգին եւ գերեզմանաքարի պես ճնշում մեր սիրտը:

Մենք նախ պետք է ձեռք բերենք այն առաքինությունները, որոնք օգնում են մեզ սիրել: Մենք պետք է աղոթենք, որպեսզի Տերը տա մեզ շնորհ՝ սիրելու թշնամիներին, այն երանելի վիճակը, որը Սուրբ Հոգու պարգև է, որը տրվում է դրան պատրաստված եւ արժանի մարդկանց: Սուրբ հայրերը ասում են, որ սերը կազմվում է երեք առաքինություններից՝ խոնարհությունից, գթությունից եւ զսպվածությունից:

Խոնարհության առաջին աստիճանը՝ տեսնել սեփական մեղքերը ծովի ավազի պես անհամար: Երկրորդը՝ ոչ մեկին չդատել եւ սիրել, հնազանդ լինել: Երանելի Անտոնիոսը՝ վանականներից մեծագույնը, անհրաժեշտ դեպքերում խորհուրդ էր վերցնում իր աշակերտներից եւ նրանց կարծիքն ընդունում էր որպես Աստծո ձայն: Հաջորդ աստիճանը՝ Աստծուն շնորհակալ լինել բոլոր նեղությունների համար այնպես, ինչպես աշխարհիկ մարդիկ ուրախանում են պատիվ եւ փառք առնելուց:

Երկրորդ առաքինությունը, որը մոտեցնում է մեզ սիրուն՝ գթասրտությունն է: Այն երբեմն այստեղ՝ երկրի վրա է արժանանում վարձատրության, սակայն ավելի կարելուրն այն է, որ մերձավորի հանդեպ գթությունը, որը գաղտնի է կատարված, վերածվում է Աստծո եւ մարդկանց, նաեւ թշնամիների հանդեպ սիրո: Որովհետեւ, եղբայրներ, մեծագույն ողորմությունը դա գաղտնի կատարած ողորմությունն է:

Հաջորդը զսպվածությունն է: Սուրբ հայրերն ասում են, որ անզուսպ մարդու հոգին ամբողջությամբ կլանվում է մարմնով եւ դառնում կոպիտ եւ անկարող հոգեւոր ապրումների, ինչպես հողեղեն մարմինը: Բացի դրանից, երբ մեր սրտում մարդու հանդեպ եռում է ատելությունն ու չարը, մենք պիտի հիշենք, որ բոլորս մահկանացու ենք: Գալու է ժամը, երբ մենք եւ մեր թշնամին միասին հող ենք իջնելու, իսկ մեր հոգիները Աստծո աթոռի առջեւ են կանգնելու՝ սպասելով Դատաստանի:

Այնպես որ, եկե՛ք աղոթենք մեր թշնամիների համար, ավելի գորանանք, համախմբվենք եւ ազատագրենք մեր գրավյալ տարածքները ազգի թշնամիներից:

ԼՂՀ միջազգային ճանաչումը՝ նրա տարածքային ամբողջականությամբ, ոչ միայն մեր ժողովրդի անվտանգության, այլև արժանապատվության հարցն է

2 ← - Ապրիլյան իրադարձություններից հետո շատ բան փոխվեց թե՛ մեր հանրային կյանքում, թե՛ քաղաքական դաշտում՝ առանձնապես արտաքին քաղաքականության, ռազմական շինարարության ասպարեզում: Ապրիլի 11-ից հետո ԼՂՀ են ժամանել բազմաթիվ պատվիրակություններ տարբեր երկրներից, մասնավորապես՝ եվրախորհրդարանի պատգամավորներ Լատվիայից, Յունաստանից, Չեխիայից, Լյուքսեմբուրգից՝ Հայաստան-Եվրախորհրդարանի պատվիրակության ղեկավար Ֆրանկ Էնգելը, Գերմանիայի Բունդեստագի պատգամավորներ, Ֆրանսիայի, Բուլղարիայի խորհրդարանի պատգամավորներ, սպասվում են նաև նոր պատվիրակություններ:

Սա վկայում է այն մասին, որ արտաքին քաղաքականության մեջ որոշակի դրական տեղաշարժեր են կատարվում:

Կարծում եմ՝ այս տարիներին բանակցային գործընթացը, ըստ էության, պարալիզացված էր եւ եական արդյունք էր տալիս, որովհետեւ հայկական դիվանագիտական միտքը չկարողացավ ավելի ակտիվ հարձակողական դիրքերից փորձել մեր հարցերին լուծումներ տալ: Դրա փոխարեն Ադրբեջանն անընդհատ ակտիվ գործունեություն էր ծավալում միջազգային տարբեր հարթակներում՝ իր տեսակետը պարտադրելով տարբեր երկրներին, ինչը նրան հաջողվեց: Նույնիսկ միջազգային կառույցները սկսեցին ճնշում գործադրել հայկական կողմի վրա: Սա մեզ համար բավականին մեծ բացթողում էր: Դարաբաղյան հիմնահարցը փորձվեց ներկայացնել Ադրբեջանի օգտին՝ գլխավորելու խեղաթուրված:

Ապրիլյան այս իրադարձությունները փոխեցին դեպքերի զարգացման ընթացքը: Ի վերջո, համաշխարհային հան-

րությունը հասկացավ, որ Ադրբեջանն ահաբեկչական պետություն է, որը փորձում է ամեն մի հարց լուծել ուժ կիրառելով, գործելով այն մեթոդներով, ինչ մեթոդներով գործում են ահաբեկչական խմբավորումները Սիրիայում, Իրաքում: Այդ ամենի մեջ եվրոպական երկրները վտանգ տեսան, եւ՝ ոչ միայն Արցախի համար: Եվրոպացիները լավ են հասկանում, որ այս կոնֆլիկտի մեջ իրենց շահն են փորձում որոնել տարբեր ուժային կառույցներ եւ կենտրոններ: Այդ կենտրոնների շահերի բախումը կարող է տարածաշրջանը հասցնել անկանխատեսելի պատերազմական գործողությունների: Այս մտահոգություններից ելնելով՝ եվրոպական երկրները արմատապես փոխելու են իրենց վերաբերմունքը:

- Արցախի ժամանած պատվիրակությունների անդամներից շատերը բարձրաձայնեցին Արցախին իրենց աջակցության մասին՝ ընդգծելով, որ անհրաժեշտ է Արցախի անկախության ճանաչման եւ ժողովրդի ինքնորոշման հարցը առաջ քաշել բանակցություններում: Ի՞նչ եք կարծում՝ ի՞նչ ընթացք կարող է ունենալ հարցի հանգուցալուծումը:

- Հարկ է նշել, որ տարիներ շարունակ մեծանում են այն եվրոպական պատգամավորների թիվը, որոնք իրենց աջակցությունն են հայտնել Արցախի ժողովրդին: Նրանց շրջանակն ավելի է մեծանում, որովհետեւ ավելի սթափ մտածող գործիչները գիտակցում են, որ հայությունն Արեւելքում քրիստոնեական քաղաքակրթության կրողն է հանդիսանում եւ ինչ - որ տեղ նաեւ Արեւելքից եկող շատ բացասական երեւույթների դեմ կանգնող մի ուժ է: Պետք է սատարել այդ երկրներին՝ ԼՂՀ-ին եւ ՀՀ-ին, որպեսզի դառնան, այսպես ասած, պարիսպ՝ այդ

բացասական նպատակները հետապնդող ուժերի դեմ:

Այս պատվիրակությունների ժամանումը հնարավորություն է տալիս կոնկրետ քննարկել ԼՂՀ ճանաչման հարցը: Նրանք լավ են հասկանում, որ Ադրբեջանն այն երկիրը չէ, որ կարողանա սթափ գնահատել իրավիճակը եւ ճանաչել ԼՂՀ անկախությունը:

Նման իրավիճակում, որպեսզի տարածաշրջանը ռազմական գործողությունների մեջ չհայտնվի, միակ ճանապարհը ԼՂՀ ճանաչումն է: Նրանք գտնում են, որ ԼՂՀ ճանաչումը կապահովի տարածքում ապրող ազգաբնակչության անվտանգությունը: Մեր արտաքին քաղաքականությունը պետք է այդ գաղափարը փորձի գարգացնել: Այլ ճանապարհ եւ չէմ տեսնում: Մեր դիվանագիտությունը պետք է այդ երկրներին ներկայացնի իրավիճակը, որովհետեւ տեղեկատվական պատերազմում Ադրբեջանը հասել է որոշակի հաջողությունների, եւ եվրոպական, ամերիկյան երկրներում լավ է են պատկերացնում մեր պահանջները:

Այսօր այդ աշխատանքներին են լծված թե՛ ԼՂՀ, թե՛ ՀՀ խորհրդարանական բոլոր խմբակցությունները:

Դրան էր ուղղված ՀՀ-ի Հայ Դատի համաժողովի կազմակերպումը ԼՂՀ-ում: Այն նպատակ է հետապնդում՝ հանդես գալ միասնական ճակատով՝ ստեղծելով համահայկական ցանց, որն իր ամբողջ աշխատանքները կուղղի մեկ նպատակի շուրջ: Մայիսի 21-22-ը ԼՂՀ ԱԺ-ում տեղի ունեցավ կուսակցությունների երկրորդ ֆորումը. այն մեկ անգամ ես փաստեց միասնական ճակատով համահայկական հարցերի շուրջ գործելու անհրաժեշտությունը:

- Արտաքին քաղաքականության մեջ ի՞նչ նոր քայլեր է անհրաժեշտ իրականացնել:

- Հարցը գուտ ձեւական բնույթից պետք է տեղափոխել գործնական հունի մեջ, այսինքն՝ անհրաժեշտ է, որ Եվրոպական հեղինակավոր կազմակերպություններին, կառույցներին լսենք ոչ թե երկու կողմերին զսպելու հավասարության կոչեր, այլև բարձրաձայնով, որ հենց Ադրբեջանն է տարածաշրջանում փորձում շիկացած մթնոլորտ ստեղծել: Պատահական չէ, որ Ադրբեջանը տարիներ շարունակ դեմ էր սահմանային միջադեպերի հետաքննման մեխանիզմների կիրառմանը: Ի վերջո, նա գիտի, որ կրակողը եւ հարձակվողը հենց ինքն է: Ադրբեջանն այսօր իր հասարակությանը ցանկանում է ցույց տալ, որ կարող է ռազմական ճանապարհով լուծել Դարաբաղյան հարցը: Ապրիլյան իրադարձություններն այս միջոց ինչու ցնդեցրեցին: Ադրբեջանը հասկացավ, որ լայնամասշտաբ ռազմական գործողություններ վերսկսելով՝ չկարողացավ լուծել այն ստրատեգիական խնդիրները, որոնք դրել էր իր առջև:

Պետք է նախաձեռնողական քաղաքականություն վարել, ոչ թե լոկ պաշտպանական՝ ինչպես դիվանագիտության մեջ, այնպես էլ այլ ոլորտներում:

Չպետք է սպասել, որ Ադրբեջանը հակահայկական քայլ ձեռնարկի, որ մենք պաշտպանվենք, այլ պետք է նախաձեռնող լինել՝ ցույց տալով, որ մենք ոչ միայն պաշտպանվողի դերում ենք, այլև պատրաստ ենք հարվածել: Պետք է հասկանալ, որ ուժի դեմ ավելի հզոր ուժ է կանգնած: Սա է խաղաղության հիմնական գրավականը:

«ԱՊՐԻԼ»

Ես դարաբաղի եմ. Ֆրանսուա Ռոշբլուան

Մայիսի 24-ին ԼՂՀ Ազգային ժողովի նախագահ, «Ղարաբաղ-Ֆրանսիա» բարեկամության շրջանակի ղեկավար Աշոտ Ղուլյանն ընդունել է «Ֆրանսիա-Ղարաբաղ» բարեկամության շրջանակի նախագահ, Ֆրանսիայի Ազգային ժողովի պատգամավոր Ֆրանսուա Ռոշբլուանին եւ «Ֆրանսիա-Հայաստան» բարեկամության խմբի նախագահ Ռենե Ռուբենին:

Ռոշբլուանը հյուրերին՝ խորհրդարանի նախագահը բարձր է գնահատել «Ֆրանսիա-Ղարաբաղ» բարեկամության շրջանակի գործունեությունը, մասնավորապես՝ նրա ղեկավար կազմի կողմից ընդունված որոշումը՝ Արցախ այցելելու եւ անմիջապես տեղում տեղեկություններ ստանալու մտադրությունը:

Այնուհետեւ հանդիպումը շարունակվել է խորհրդարանի նիստերի մեծ դահլիճում: Ընդլայնված կազմով հանդիպմանը մասնակցում էին ԱԺ պատգամավորներ, կառավարության անդամներ, գիտակրթական եւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

«Ֆրանսիա-Ղարաբաղ» բարեկամության շրջանակի նախագահ Ֆրանսուա Ռոշբլուանն իր ելույթում նշել է, որ իրենց համար շատ կարեւոր է ապրիլին Ադրբեջանի կողմից ծավալած ագրեսիայի հետեւանքներին տեղում ծանոթանալու եւ փաստացի տեղեկությունները «Ֆրանսիա-Ղարաբաղ» բարեկամության շրջանակի, ինչպես նաեւ Ֆրանսիական իշ-

խանություններին եւ հասարակությանը ներկայացնելու հնարավորությունը:

«Այսօր, այցելելով Արցախի սահմանամերձ բնակավայրեր եւ առաջնագիծ, մենք տեսանք, որ այնտեղ իրենց հողն են պաշտպանում երիտասարդ զինվորներ, ովքեր իրադարձից հետո են ծնվել, սա-

կայն ունեն իրենց հայրենիքը պաշտպանելու պատրաստակամություն եւ խիզախություն», - նշել է Ֆրանսուա Ռոշբլուանը:

Ելույթի ընթացքում Ֆրանսուա Ռոշբլուանը շեշտել է. «Ավելի քան երբեմն մենք համերաշխ ենք Արցախի հետ, եւ Ադրբեջանը չի կարող մեզ լռեցնել:

Նրանք քրեական տարբեր գործիչների դեմ, այդ թվում եւ իմ: Եթե մինչ այսօր ես ասել եմ, որ Ադրբեջանի պահվածքը նման է ահաբեկչական երկրի պահվածքի, ապա այսօր, նախորդ ամսին տեղի ունեցածը փաստում է՝ Ադրբեջանը ահա-

բեկչական պետություն է»:

Ռոշբլուանը դատապարտել է Ադրբեջանի կեցվածքն ու շեշտել, որ Ֆրանսիացիների համախմբումն Արցախի հետ էլ ավելի է ուժեղանում ու սերտանում:

«Ես դարաբաղի եմ»,- իր խոսքն այսպիսի հայտարարությամբ է ավարտել Ֆրանսիացի խորհրդարանականը:



«Ֆրանսիա-Հայաստան» բարեկամության խմբի նախագահ Ռենե Ռուբեն իր գոհունակությունն է հայտնել Արցախում գտնվելու համար եւ նշել, որ իրենց փորձում են լայնածավալ աշխատանք տանել ինչպես Ֆրանսիացի իրենց գործընկերների, համակուսակիցների, այնպես էլ այլ կուսակցությունների ներկայացուցիչների շրջանում՝ Ադրբեջանական լոբբինգին հակազդելու եւ իրականությունը տեղ հասցնելու համար:

«Ադրբեջանը, ապրիլյան դեպքերից հետո, փորձում էր ԵԽԽՎ-ում միակողմանի նախագծեր ներկայացնել, որոնք սակայն մերժվեցին: Կարծում եմ, մենք պետք է կրկնապատկենք մեր ջանքերը՝ տեղի ունեցածի մասին իրական տեղեկատվություն մատուցելու համար», - ընդգծել է Ռենե Ռուբեն:

«Ժամանակն է եկել, որ համանախագահող երկրները բանակցությունների թեմա դարձնեն Արցախի անկախության եւ Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի ճանաչման հարցերը», - ընդգծել է Ռենե Ռուբեն:

Ամփոփելով հանդիպումը՝ Աշոտ Ղուլյանը հավաստիացրել է, որ անկախ նետված մարտահրավերների ձեւից եւ բովանդակությունից, Արցախը շարունակելու է պայքարը հանուն ժողովրդավարական արժեքների ու ազատության, եւ այդ պայքարում շատ կարեւոր է նույն արժեհամակարգը կրող ժողովուրդների անվերապահ աջակցությունը:

Սեֆ. ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ



Ե Ր Կ Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Խմբագրական

Ադրբեջանի ձախողումի եւ հայկական դիվանագիտության զգուշության ժամանակը

Վիեննայի հանդիպման մասին շատ է խոսվել, սակայն այդ հանդիպման ժամանակ որոշակի նրբություններ դուրս են մնացել վերլուծական շրջանակներից: Նախ՝ պետք է հաշվի առնել, որ Վիեննայում արտառոց ոչինչ չէր ձեռնարկվում՝ չնայած այն տեղի ունեցավ արտառոց իրադարձությունից հետո: Այնտեղ ոչ մի փաստաթուղթ չստորագրվեց, որտեղ հասցեական հայտարարություն չէր դրվում: Ուղղակի այդ հանդիպումը տեղի էր ունենում աննախադեպ պայմաններում. այսինքն՝ պատերազմական գործողություններից հետո, ինչը 1994-ից ի վեր չէր եղել: Վիեննայի հանդիպման ժամանակ առաջին հայացքից աչքի զարնվողն այն է, որ թվում է, թե այնտեղ Ալիևին որոշակի նախազգուշացումներ են տվել եւ մեղմ ասած՝ Ալիևի գործերն այնքան էլ լավ չէին ու նրա դիվանագիտական հնարքներն այս անգամ այնքան էլ լավ չաշխատեցին:

Եվս մեկ կարեւոր նկատառում՝ Վիեննայում մենք տեսանք Արցախյան հիմնախնդրում Արեւմուտքի ընդգծված ակտիվություն: Թերեւս, դա պատահական չէ, քանի որ հենց հանդիպումը, ինչպես նաեւ անվտանգության եւ հետաքննության միջոցների ներդրման առաջարկը, գալիս է ԱՄՆ-ից: Իսկ ինչո՞ւ է Արեւմուտքն ակտիվանում Արցախյան հարցում, պարզ է. ԱՄՆ-ում եւ Եվրոպայում հասկանում են, որ Արցախում անկայունության պահպանման դեպքում այն իր ազդեցությունը կունենա նաեւ Արեւմուտքի շահերի եւ Եվրոպայի էներգետիկ անվտանգության վրա: Այնպես է, որ Ռուսաստանից Եվրոպայի էներգետիկ կախվածության թուլացման միակ ճանապարհը հանդիսանում է մեր տարածաշրջանը, եւ այստեղ միայն ադրբեջանական նավթի եւ գազի մասին չէ խոսքը, այլեւ՝ իրանական, միջինասիական, մերձավորարեւելյան եւ այլն: Պատերազմական իրավիճակի ստեղծման վտանգի ժամանակ, պարզ է, որ Արեւմուտքը պետք է իր շահերը պաշտպանելու համար կողմերին ստիպի դադարեցնել ռազմական գործողությունները: Իսկ թե ո՞վ է սկսել դրանք, ներկա տեսլուրդիական դարում, բոլորն էլ գիտեն: Ալիևի «հնարքը» ձախողվեց, նա չկարողացավ ո՛չ ռազմական, ո՛չ դիվանագիտական ճանապարհով իր առջեւ դրված խնդիրը կատարել:

Հանդիպման նրբություններից կարելի է համարել նաեւ Եվրամիության ակտիվ մասնակցությունն Արցախյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման գործընթացին: Ինչպես տեսանք՝ հանդիպմանը Եվրամիությունը ներկայացված էր այդ միության արտաքին հարաբերությունների պատասխանատու կառույցի ամենաբարձր ներկայացուցչի մակարդակով, մինչդեռ Ֆրանսիան՝ ԱԳՆ փոխնախարարի, ինչից կարելի է եզրակացնել, որ նկատվում է Արցախյան խնդրում Ֆրանսիայի դերի նվազեցման եւ Եվրամիության դերի աճման գործընթացի սկիզբ: Սա էլ ապացուցում է վերոնշյալը՝ Արեւմուտքի հետաքրքրությունը Արցախում խաղաղության պահպանման հարցում:

Հանդիպումից հետո հատկանշական էր. նախ՝ հանդիպումից անմիջապես հետո ՌԴ անվտանգության խորհրդի նիստում Վ.Պուտինն անդրադարձել է նաեւ Վիեննայի հանդիպմանը, ինչը նշանակում է, որ ՌԴ-ն բարձագույն մակարդակով իր երկրի անվտանգության հայեցակարգում է դիտարկում եւ Վիեննայի հանդիպումը, եւ Արցախյան հիմնախնդրը:

Ինչ վերաբերում է Վիեննայի հանդիպման պայմանավորվածություններին, ապա Ադրբեջանն իրեն հատուկ գործելաոճով նշեց, որ «իրենց Վիեննայում որտեղ պարտավորություն իրենց վրա չեն վերցրել»: Դրան հետեւեց Արեւմուտքի պատասխանը: ԱՄՆ-ն անուղղակիորեն նախազգուշացումներ տվեց Ալիևին՝ օգտագործելով Ադրբեջանում մարդու իրավունքների ոտնահարության գործնը: Դրան հաջորդեց լրագրող Խ.Խամայիլովայի ազատ արձակումը: Այս ամենը միանշանակ ապացուցում է այն, որ Նահանգներն ազդանշան են տալիս Ալիևին, որ այլեւս չեն հանդուրժի նրա խաղերը, այդ թվում՝ արցախյան խնդրում, որը, թերեւս, այս փուլում, փորձում է իր ձեռքը վերցնել Վաշինգտոնը: Թե ինչպես այս ամենը կավարտվի, ցույց կտա ժամանակը, սակայն այն, որ ներկայումս հայկական կողմն ունի նոր հնարավորություններ, փաստ է, խնդիրը՝ այն զգուշությամբ, զգոնությամբ եւ տեղին օգտագործելն է:



Արցախի Հանրապետության հռչակման 25 ամյակի միջոցառումների մեկնարկը տրվեց Սիրիայում

Սիրիայի հայությունը, ի հեճուկս պատերազմական ծանր իրավիճակի, համախմբվեց՝ առաջինը նշելու Հայաստանի անբաժան մասնիկը հանդիսացող Արցախի Հանրապետության հռչակման 25-ամյակը:

Մայիսի 22-ին Հայկում տրվեց մեկնարկը: Հանդիսությունը կազմակերպվել էր Բերիո Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Շահան Սրբ. Արք. Սարգսյանի հովանավորությամբ եւ ՀՀԴ ՍԵՄ-ի Կենտրոնական վարչության «Արցախ» մասնաճյուղի կողմից:

Հանդիսությանը ներկա էին ՀՀ Հայկում գլխավոր հյուպատոս Տիգրան Գեւորգյանը, ՀՀԴ Արցախի ԿԿ ներկայացուցիչ, ԼՂՀ ԱԾ «Դաշնակցություն» խմբակցության ղեկավար, Արցախյան ազատամարտի առաջամարտիկ Դավիթ Իշխանյանը, Բերիո Հայոց թեմի առաջնորդի ներկայացուցիչ Տ.Տարեհ քահանա Շաքարյանը, ազգային վարժարանների տնօրեններ եւ ուրիշներ:

Պատերազմական թեժ օրեր ապրող հայկապահայ հանդիսատեսի համար ցուցադրվել է Արցախի մասին

պատմող ներկայացում:

Այնուհետեւ ՍԵՄ-ականները /ՀՀԴ Սիրիայի երիտասարդական միություն/ հետաքրքիր համադրումով ներկայացրել են Արցախի պատմությունը՝ 14-րդ դարից մինչեւ մեր օրերը:

Ներկայացվել է արցախյան ազատամարտիկների առօրյան եւ մարտունակությունը խորհրդանշող տեսաերիզ:

Օրվա բանախոսը Դավիթ Իշխանյանն էր, ով առաջին հերթին իր խոսքն ուղղելով սիրիահայությանը՝ նշել է.

«Անկեղծ ասած՝ այսօր չէ, որ մեր հանդիպումը պիտի կայանար: Մեր ֆիզիկական ներկայությամբ տարիներ առաջ պատրաստակամ էինք լինելու ձեր մեջ ու ձեր կողքին՝ միասին դիմագրավելու հայրենի հողից հեռու, բայց նաեւ մեր ժողովրդին նետված ձեռնոցը:

«Մեր անմիջական կողք կողքի չլինելն արդարացված էր եւ հասկանալի, նաեւ՝ փոխըմբռնելի: Մենք մեր ժողովրդին սպառնացող տարբեր ճակատների պաշտպաններն ենք այս-

տեղ, Արցախում, Հայաստանի Հանրապետության սահմաններում, բայց կարեւորը՝ մենք միասին էինք մեր բոլոր ծանր օրերին, Նույն մտայնությամբ, Նույն հոգսերով, ապագայի նկատմամբ Նույն տեսլականով, հաղթելու կամքով:

Առիթն օգտագործելով՝ ուզում եմ Արցախի ժողովրդի եւ մեր իշխանությունների անունից շնորհակալություն հայտնել Ձեզ՝ 25 տարի առաջ մեր մեջ լինելու եւ մեր հաղթարշավին մասնակից դառնալու համար, նաեւ հուսադրել, որ մեր որդեգրած ուղին անշեղելի ու անկասելի է: Վկան՝ անցած ապրիլյան օրերը:

Դ. Իշխանյանը նշել է նաեւ, որ սիրիահայությունը տասնամյակներ ի վեր եղել է Սփյուռքը սնող կարեւոր օջախներից մեկը՝ իր հոգեւոր, մտավոր, բարոյական արժեքներով ու արժեհամակարգով:

«Վերջին տարիներին պարտադրված տեղաշարժերով Հայրենիքում, թե Սփյուռքի գաղթօջախներում կա իր ներկայությամբ նորից համ ու նոր պարգեւեց մեր ժողովրդին: ➔ 2

ԼՂՀ միջազգային ճանաչումը՝ նրա տարածքային ամբողջականությամբ, ոչ միայն մեր ժողովրդի անվտանգության, այլեւ արժանապատվության հարցն է



- Ապրիլյան ռազմագործողությունների ժամանակ խախտվեց ԼՂՀ տարածքային ամբողջականությունը, եւ Սահմանադրությամբ ամրագրված մեր հողերն անցան թշնամուն: Արդյո՞ք մենք պետք է հաշտվենք կատարվածի հետ: Կարողացե՞ք 2-րդ էջում

Ես դարաբաղի եմ. Ֆրանսուա Ռոշբլուան



Մայիսի 24-ին ԼՂՀ Ազգային ժողովի նախագահ, «Ղարաբաղ-Ֆրանսիա» բարեկամության շրջանակի ղեկավար Աշոտ Ղուկասյանն ընդունել է «Ֆրանսիա-Ղարաբաղ» բարեկամության շրջանակի նախագահ... Կարողացե՞ք 3-րդ էջում